

A GOOD
ADVERTISING
MEDIUM

Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի

Շ Ա Ռ Ա Թ Ա Թ Ե Ր Թ
THE CITIZEN

THE ONLY
ARMENIAN
PAPER
Published in
California.

ՀԱՄԱՐ Ա. ԹԻԻ 9.

ՖԲԷՉՆՕ, ՔԱԼ. ՇԱՐԱԹ, ՀՈԿՏ. 11, 1902

ԳԻՆ 5 ՍԷՆԹ

— Կ՛ՈՒԶՈՒԻ —

Յաջող գրաշար մը Շարաթաթերթս շարելու համար: Մանրամասնութեանց ու պայմաններու համար գիտել կամ գրել խմբագրութեանս հասցէին:

Հայ Իգական Սերը

ԵՒ ՊՈՍԹՐԵՆԻ "ՀԱՅՐԵՆԻՔ" ՇԱՐԱԹԱԹԵՐԹԸ

— 0 —

Պոսթրենի Հայրենիք րազիրը որ Դաշնակցութեան բերան ճանչցուած է Ամերիկայի մէջ, իւր Օգոստոս երեսունի թուին խմբակրականով հետեւեալը կուղղէ Հնչակեաններու հասցէին:

"Եթէ այդ տխմար շարաթաթաները հետևողական են ու տրամաբան, ճիշդ հիմա ժամանակն է որ իր բննց կենդանիքը սուած Սասուն վաղեն, և ենթարկուին թիւրքերու և Քիւրտերու պահանջին, գործի վրայ ցուցնելով իրենց համազմունքներու անկեղծութիւնը:"

Այս ստակալի սողերուն հայ կին մը՝ Տիկին Ս. Յ. կը պատասխանէ Չ. Հայրենեացի մէջ ու կըսէ իմէջ այլոյց:

"Հայ կնոջ գարաւոր համեստութեան երեսին նետուած այս վայրենի նախատինքը կարողալով, իրը հայ կին մը՝ նախանձախնդիր արատաստման գտնուող հայ կնոջ պատուոյն՝ կը բողոքեմ այս անարգական լեզուին դէմ: Եթէ քաղաքավար պարոնը իր դաւանանքէն չեղող մարդոցմէ գանգատ ունի, թող պարզ խօսի աւանց մեր սեռը նախատելով վրէժ լուծելու վախկոտ փորձին: Ոչ ես և ոչ ալ ինծի նմաններ մեղանշող գտնուեցանք յեղափոխութեան դէմ՝ ամուսնութիւնը ամուրի կեանքէն նախընտիր սեպելով:"

"Ներկայէն աւելի ուժգին թափով մը պիտի սատարէ հայ կինը յեղափոխութեան գասին, երբ դուք, Պր. գաշնակցապետ, և ձեզի պէտք մտքէք ձեր ազատութեան, ազնուացնէք ձեր բարքերը և գոնէ կնոջ մը պատիւը յարգելու չափ կրթութիւն ունենաք:"

"Կը հաւատամ թէ դուք ալ մայր մը ունեցած էք, եթէ քոյրեր չունիք: Պիտի ուզէիք որ ձեր հակառակորդներն ալ գանոնք նախատելով զբաղէին: Անշուշտ ձեր շարքին մէջ ալ կը գտնուին մարդիկ որոնք ընտանեկան կեանքի սրբութիւնը կըմբռնեն. անոնք գոնէ սորվեցնելու էին ձեզի լեզուինդ չափաւորել:"

"Կը խորհիք թէ մենք ամուսնանալով ոճիր գործեցինք: Գուք շարունակեցէք ամուրի մնալ, գոնէ հայ ազգան մը պատիւը նախատինքէ փրկած կըլլաք:"

"Երկրի մը մէջ կապրինք ուր իգական սեռը ամեն

յարգանք կը վայելէ. Ամերիկայի հայ թերթի մը մէջ հայ կնոջ ուղղուած այդ 'թուումպաճիական' լեզուն նախատինք մ'է ամբողջ գաղթականութեան ինչպէս նաև հայ մամուլին դէմ: Եթէ այրեր կը պակսին մեր ընտանեկան պատիւը 'թուումպաճի' խմբագրիդ հայհոյանքէն ազատելու, կիները չեն կրնար լուռ մնալ. . ."

Չայն Հայրենեացի վերջի թուին մէջ կը կարդանք Ութըրէի գրուած ուրիշ նամակ մը՝ երեք հայ տիկիններու կողմէ, որ կը բողոքէ Հայրենիքի 168րդ թուին մէջ ըսուած աւելի սոսկալի կտորի մը դէմ՝ զոր չենք կարող մեր տառերով արտատպել հոս: Սա յարձակումը հայ իգական սեռին դէմ չի լուած նախատինք մըն է, և չենք հաւատար թէ ուրիշ ո և է թերթ մը այդ խմատով բառ մը ըսած ըլլայ երբէք:

Հայ կանանց բողոքախառն պատասխանը երկայն գրութիւն մ'է, զոր տեղ չունինք ամբողջութեամբ հասարտատպելու համար. սակայն սա չափը ըսելու ենք թէ տիկինները կոչում կընեն հայ ժողովուրդին՝ "հըրապարակը մաքրել այսպիսի անբարոյականութիւններէ, ու ամեն միջոց ի գործ դնեն հանրային գործի մէջ դեր չի տալու այսպիսի տխմար անձերու ուրոնք չարամիտ ու ցած գրութիւններով նոր սերնդի բարոյականը սպաննելու կըսպառնան:"

Նամակը կը վերջանայ հետեւեալ խօսքերով:

"Աճօթ մը պիտի ըլլայ որ ասանկ թերթեր մեր ընտանեկան շեմէն ներս մտնեն: Եթէ հայ մարդեր առնական քաջութեամբ այս սրբապղծումին մէջ թերանան, ՍԵՆՔ ՀԱՅ ԿԻՆԵՐՍ պիտի ջանանք պաշտպանել մեր սեռի պատիւն ինՉ ԿԵՐՊՈՎ և ԻՆՉ ԳՆՈՎ որ ալ ըլլայ:"

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒԻՐԵՐ

— 0 —

Այս երեկոյ տեղի կունենայ Էճըրի Հօլին մէջ Հայ Հանրապետական ժողով մը՝ Հայոց քաղաքական Ակմբի հովանաւորութեան տակ: Օրուան խնդիրներուն վրայ պիտի խօսին Տքթ. Չ. Բաւլ, Մ. Պ. Հէրիս, Ճ. Օ. Թրէյպլըր և ուրիշեր: Երգեր պիտի երգուին տեղացի երգիչ խումբի մը կողմէ և նուագածութիւններ պիտի ըլլան: Բոլոր Հայերը հրաւիրուած են ներկայ ըլլալ:

—Երկու շաբաթ վերջ տեղի պիտի ունենայ Հայ Ռամկավարական ընդհանուր ժողով մը՝ նոյն կամ աւելի ընդարձակ սրահի մը մէջ, ուր ի մէջ այլոց պիտի խօսին ծանօթ ատենախօս Մայրըս Վալիս, կեդրոնա-

կան յանձնախմբի նստադահլը՝ փաստարան Ֆութ և ուրիշներ։ Սա ժողովն ալ տեղի պիտի ունենայ մեր Ակումբի նստաձևունութեամբ։ Մանրամասնութիւնք պիտի ծանուցուին ժողովրդեան։

—Ֆրէզնոյի Հայոց Գրադարանի Միութեան շէնքին հաւեր՝ պղտիկ իղիկի մը մէջ կը բնակի երկար ժամանակէ ի վեր հայ ծերունի մը Ս. Յ. անուն։ Միութիւնը տարիներ առաջ սրտօնած էր այս անձը հին սպրիլ առանց համտական մը վճարելու։ Հիմայ՝ որ այդ շէնքը իբր գարոց կը գործածուի քաղաքիս վարժարանաց վարչութեան կողմէ՝ յիշեալ ծերունիին պաշտօն տրուած է Գրադարանի Միութեան կողմէն շէնքին ու սրահին մաքրութեան հոգ տանել՝ սրտեալ վըճարուամով մը։ Կը լսենք թէ Գարոցին վարժուհիները կարգ մը ծանր դժուարութիւններ ունեցած են վերջերս յիշեալ ծերունիին հետ՝ մասամբ մեզ անձամբ պատճառներու համար, ու բողոքած են վարժարանաց վարչութեան՝ պաշտօնակալ որ ծերունին այլ քր փութազրուի անկէ։ Հակառակ պարագային՝ վարժուհիք յայտարարած են իրենց պաշտօնէն հրաժարիլ։ վարչութիւնը այս ինչիւր Միութեան Գործադիր Ժողովին ներկայացուց անցեալ օր՝ ինչորեւից որ անմիջական կարգադրութիւն մը ըլլայ։ Գործադիր Ժողովը կը լսենք թէ պիտի ջանայ գոհացում տալ վարչութեան առջարկին։

—Մինչև Սեպտեմբեր 25՝ Գաւառիս քուէատու քաղաքացիներէն 10321 անձինք միայն արձանագրուած և յառաջիկայ ընտրութեանց ատեն քուէարկելու իրաւունք ստացիր են։ Երկու տարի առաջ Ֆրէզնոյի քուէատուներու թիւը 9653 էր միայն։ Թէև կարելի չէ այժմ գիտնալ թէ քանի հայ քաղաքացիներ յառաջիկայ ընտրութեան պիտի կրնան մասնակցիլ՝ քանի որ պաշտօնական ցանկը սպառած ու հրապարակ երած չէ տակաւին, բայց կրնանք ըսել թէ ատեն թիւը երկու և երեք հարիւրի մէջտեղերը ըլլալու է։ Հայ գաղթականութեան թուին և ա՛նց մէջ քաղաքացի կամ քուէատու ըլլալու իրաւունքը ստացող անձանց բազմութեան նայելով՝ շատ աւելի մեծ զօրութիւն մը ունեցած ըլլալու էր մեր գաղութը այս ընտրութեան մէջ։ Գիտելի է թէ Հայոց Քաղաքական Ակումբը, որ տակաւին ձրի հակառակորդներ ունի քաղաքիս մեր սպգայնոց յառեսան գասակարգին մէջ, կթէ աշխատած չըլլար հայ քաղաքացիներու թիւը աւելցնել՝ հայ քուէն շատ աւելի սկսար պիտի երևէր այս յառաջիկայ ընտրութեանց առթիւ։

—Տիրքան Մանուկեանի՝ սպաննութեան գասին մէջ վկայ եղող անձանց պաշտօնական հրաւիրագիրներ (Մուփինի) զրկուեցան շաբթուս մէջ։ Կրտուի թէ երկու կողմէն քատատունէ աւելի վկաներ կանչուած են ցարդ։

—Քարսեղեան և Էփտէրեան ծանօթ Գասը, որ պիտի տեսնուէր անցեալ Հինգշաբթի օր, յետաձգուեցաւ Հոկտ 30ին։

—Ք. Մ. Միրիքեան քսան արտավար այգի մը զնեց հազար հինգ հարիւր տարրի, և ինը արտավար այգի մը՝ հազար ութը հարիւր տարրի։

ՈՐՈՑ ՈՐ ԱՆԿ Է

Կը խնդրենք ամեն անոնցէ որոնց ծրարով Քաղաքացի կը զրկենք որ հաճին մեզ խմայնել թէ կը յաջողին զրկուած բոլոր թերթերը վաճառել, և թէ կը փափաքին որ սակէ վերջ աւելի թերթ զրկենք իրենց։

ԾԱԽՈՒ ԳՐԲԵՐ

Ամէն անոնք որ կը փափաքին վիճեալի տպուած որ և է զերք ստանալ, կրնան զայն ձեռք բերել խմբարարութեան միջոցաւ, որ նոյն Միութեանութեան գործակալ կարգուած է։

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔՅԻԻ տպարանին մէջ կը տպուին ամեն տեսակ Հայերէն և Անգլիերէն գործեր՝ Այցեստան, նստակազուրի, պոհարան, հարսանեկան ծանուցագիր և տեսարակներ գոհացուցիչ գներով։

ԿԱՐԵՒՆ ԱՅՐ

Քաղաքական Վեժնախմբի Հայոց

Յառաջիկայ շաբթի երեկոյն, Հոկտ. 14, ժամը Ջին ֆուլթ Օֆիսի վրան Էճըրլի Հօլին մէջ՝ հայ քաղաքացիներուն մէջ հանգէսը տեղի պիտի ունենայ օր ներկայ քաղաքական պոքսթրին նկատմամբ ատենախօսութիւններ պիտի ըլլան և մասնաւորապէս Հանրապետականաց (Սեփրիքըն) քաղաքականութիւնը պիտի պարզուի։ Ամերիկացի ատենախօսները պիտի ըլլան Տէթ. Քառն, փաստարան Մ. Պ. Հէյնս և Ճ. Օ. Քրէյքլը։ Հայ ծանօտներ ալ պիտի ըլլան։ Հասարակականաց քաղաքացի խմբը (Կրի Քըլ) ընտիր կողմեր պիտի երգէ ու լաւ նուագաւորութիւն պիտի ըլլայ։ Բոլոր Հայերը թէ անկերկեան քաղաքացի ըլլան թէ ոչ՝ անխաղաղ կը հրաւիրուին ներկայ գտնուել այս կարեւոր հանդիպին։

Ի դիմաց Ճ. Հայ Քաղաքական Ակումբին
Ֆրէզնո, Հոկտ. 4, 1902
Ատենապարտ
Ն. Է. Ք. Մ. Միրքեան

ԳՈՐԾԱԿԱԼ ՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՂԱՔՅԻՒՆ

Միաբարոս, Մասս.	—	—	Պ. Միքայէլեան
Ուայթինգիլ, ' .	—	—	Հ. Նիկողոսեան
Ուէսթ Հայքըն, Ն.	ձէրլի	—	Հ. Մալուճեան
Պրայթըն, Մասս.	—	—	Գ. Վարդանեան
Պոթըն, Մասս.	—	Սիրականեան և Գանիլիան	—
Սէլիս, ' .	—	—	Ա. Թաշեան
Սըմիթ, Նիւ ձէրլի	—	—	Ս. Հայագործեան
Հէյրլի Մասս.	—	—	Մ. Կարո
Սէնթըլ Ֆօլ, Մասս.	—	—	Նշան Մինասեան

Մեծ Գործադրոչը

—0—

Փէնսիլվանիոյ սոսոկի հանքերը երկար տասնէ ի վեր զագար առած էին ընդհանուր գործադուլի մը պատճառաւ։ Այս հանքերու մէջ աշխատող բանուորները՝ իրենց անտանելի աշխատութեան փոխարէն գտնէ կէս մարդավայելի փոխարինութիւն մը կը պահանջեն իրենց գործատէրներէն, և թիչ մալ մարդավայելի վարձուքը զէպի իրենց գործաւորական ընկերութիւնը։ Սակայն սոսոկի իշխանները՝ կռիւնելով իրենց նիւթական մեծ զօրութեան՝ մերժեցին կազմակերպութեան արդար պահանջը, և գործադուլը սկսեց՝ սակաւներ առաջ։ Վիկրները այս մեծ պայքարին մէջ երկու հակառակ կողմերը միայն անմիջական շահեկանութիւն ունէին։ Ափ մը միլիոնատէրեր մէկ կողմը, իսկ դժգոյն գործաւորներու մեծ բանակ մը միւս կողմը կեցած շարունակեցին իրենց խաղաղ կռիւր՝ առանց արտաքոյ կարգի ուշադրութիւնը գրաւելու ընդհանուր ժողովրդեան։ Սակայն ինդիլը երթալով տարբեր կերպարանք կը ստանար։ Հրատարակին վրայ գըտնուած պատրաստ սոսոկի մէկ ծայրէն գործածուելով՝ սոսոկի սով մը վրայ կը հասնի այժմ։ Արեւելեան քաղաքներու մէջ մէկ թմո սոսոկին գինը հինգ տղարէն քանի բարձրացած է արդէն, և այն սղ մեծ գժուարութեամբ կարելի է ձեռք ձգել։ Իրաց այս կացութիւնը բնական է որ սուր կերպարանք մը կուտայ բուն ինդոյն, և գայն ընդհանրութեան պատկանող հարց մը կընէ։ Արեւելեան քաղաքներու աղքատ դասակարգը սկսած է արդէն առաւելի այս առթիւ։ Քառիփօրնիայ բնակող ժողովրդէն անոնք միայն կրնան լմբունել սոսոկի սովին նշանակութիւնը հոն՝ պոնք առթիւ՝ ունեցած են այդ կողմերը այցելել ձմեռ ժամանակ։ Հոս ձմրան եղանակին հանքածուխ չունենալը զգալի պակաս մը չէ ժողովրդին համար, բայց արեւելեան քաղաքներու մէջ սոսոկի չի գտնելը անխուսափելի մահ կը նշանակէ։ Եթէ գործադուլը թիչ մը ևս երկարի՝ անթիւ կեանքեր զոհ պիտի երթան ստակալի ցուրտին որոյ ներկայութիւնը արեւելքիք արդէն սկսած են վաշխել։ Ապացութեան ներկայ վիճակին մէջ հանրութիւնը ամենէ մեծ շահեկանութիւնը կուսենայ այս պայքարին մէջ՝ միայն սա տարբերութեամբ թէ ժողովուրդը անձնատար ըլլալու իրաւունքն անգամ չունի այս կուսին մէջ, բայց գործադուլի աշեղ հետեանս՝ ամենէ թանկագին զոհը ինք կուտայ։

Նախագահ Բուզվիլթ՝ գալիքը և անոր ահաւոր հետեւութիւնը զգալով՝ անցեալ շարթու փորձ մ'ըրաւ հաշտարարի մը դերը կատարել հանքատէրերու և գործաւորական ընկերութեանց միջև։ Սակայն փորձը անյաջող եղաւ, և սրովհետեւ պարզ հաշտարար մը ըլլալէ զատ ուրիշ ո և է իրաւունք արուած չէ Միացեալ Նահանգաց Նախագահին՝ այսօրինակ փոփոակ իրենց իրենքու մէջ իր ձայնը բերել ընել տալու, ուստի կը մնար անոր ձեռնթափ ըլլալ՝ գէթ ներկային մէջ։

Անցեալ Դարաթ օր Նախագահը Ուաշինկթըն հրաւիրած էր հանքերու և բանուորներու ընկերութեանց

ներկայացուցիչները՝ անոնց մէջ այս մասին հաշտութիւն մը յառաջ բերելու նպատակաւ։ Հրաւիրեալք որոշեալ ժամանակին կուգան ու Նախագահին հետ ստանձին սենեկի մը մէջ կը փ կուսին՝ խորհրդակցելու համար։ Նախագահը խնամով պարտաստուած մի գրութիւն կը կարդայ երկու կողմի ներկայացուցիչներուն, որով ժողովրդի կրած ու կրելիք տառապանքները մասնանիշ ընելով՝ գլմում կընէ անոնց հայրենասիրական ու մարդասիրական զգացմանց՝ ինդրելով որ՝ առանց ժամանակ կորսնցնելու՝ հստակացողութեան գտն, ու հանքերը գործել սկսին։ Վիճարանութեան սեղի չի սաղու համար՝ Նախագահը կը թելադրէ իր ունկնդիրներուն երթալ խորհիլ, և երեք ժամէն՝ գործադուլը բաւնալու համար՝ իրենց գրաւոր առաջարկները ներկայացնել իրեն։

Հեռագիրը կը ծանուցանէ թէ Ճոն Միչըլ՝ հանքերու գործաւորաց ընկերութեան նախագահը, որ հարիւր յիսուն հազար հոգի կը ներկայացնէ, որոշեալ ժաման հետեւեալ առաջարկը կը ներկայացնէ Նախագահին թէ՝ գործաւորք անմիջապէս գործի սկսին՝ սա պայմանաւ որ անոնց՝ գործատէրերու զէմ ունեցած բոլոր ինդիլները Նախագահին և անոր կողմէն կարգուած յանձնախմբի մը յանձնուի, և այս մարմնոյ պաշտմանը վերջնական ու պարտաւորիչ ըլլան երկու կողմերուն համար։

Գործատէրներու առաջարկութիւնը սլզանք ու զայրոյթ պատճառող գրութիւն մ'է։ Արդ մը կեղծ ու պատիր խօսքեր ընելէ վերջ՝ սոսնք կը պահանջեն որ գործաւորք գործի սկսին անմիջապէս, եթէ անոնց մէջ արտաւճ ունեցողներ կան՝ այդպիսիք անհասարար զլմին իրենց տէրերուն և ինդիլներին կարգադրեն անոնց հետ։ Աժուխի թագաւորները կը մերժեն գործաւորական ընկերութիւնը ձանչալ, թէև իրենք իրենց ընկերութիւնը ունին։ Իրաւունք կուտան գործաւորին տեղոյն գաւառական դասարանին զիմել՝ երբ նա չի կարողանայ գոհացուցիչ կարգադրութիւն մը ընել իր մեծաւորին հետ՝ պայմանաւ որ դատարանին վճիռը վերջնական և ընդունելի ըլլայ երկուստեք։ Սա ծիծաղելի առաջարկը ընելէ վերջ՝ վեհափառները կամբաստանեն Ճոն Միչըլն ու իր ընկերները իրր խընտարարներ ու հասարակաց հանցիտար վրդովող ոչնչականներ, որոնք կարգիլին եղեր՝ իրենց տասն եւ եօթը հազարի չափ հաստատրիմ գործաւորները գործի սկսելէ՝ մեծամեծ սպառնալիքներ ընելով։ Արտեն թէ վերջի երեք ամիսներուն մէջ բազմաթիւ սպաննութիւններ տեղի ունեցեր են հանքերու գաւառներուն մէջ, և թէ այս խռովարարներն են ուղղակի պատասխանատու այս բոլոր եղեւնագործութեանց։ Կը պահանջեն որ Փէնսիլվանիոյ Նահանգապահ գորբերը զինու սակ կանչուին ու գան պաշտպան կանգնին իրենց հանքերուն ու հաստատրիմ գործաւորներուն։ Կը յաւերան նուե թէ քանի որ Փէնսիլվանիան թերացած է իր այս պարտականութիւնը լիովին կատարելի կը պահանջեն որ Նախագահը այս առթիւ իր պարտականութիւնը կատարէ ու ձգվէ գործաւորաց իրաւունքը զինու զօրութեամբ։

Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Կը հրատարակուի ամեն Շարաթ օրեր ի թիւ 1033

ՃէՑ Փողոց, Էքսփոզիթըրի Շէնքին մէջ:

Հ. ԷԿԻՆԵԱՆ, ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու և Քանադայի համար
Տարեկան մէկ ու կէս Տոլ. — Վեցամսեայ 75 Սենթ

Ուրիշ երկիրներու համար

Տարեկան 10 Ձրանգ — — Վեցամսեայ 5 Ձրանգ

Քաճանորագիրնը կանխիկ վճարելի է միշտ

Նամակ, ծրար կամ դրամ կը զրկուին խմբագրու-
թեան հետեւեալ հասցէիւ՝

To The Editor of

THE CITIZEN

P. O. Box 1224

Fresno, Cal.

THE CITIZEN

The Only Armenian Paper Published in the State of
California.

H. EGUINIAN, Editor and Manager

OFFICE, 1033 J STREET FRESNO, CAL.

SUBSCRIPTION RATES (Payable in Advance)

One Year.....\$1 50 | Six Months.....75 Cents

ՅՐԷՋՆՕ, ՔԱՒԻՅՕՐԵՒԱ. ՀՈԿՏ. 11, 1902

Քաղաքական Պայքար

—0—

Անցեալ Շարաթ երեկոյ տեղի ունեցաւ Քօրթ Հաւ-
զի պարտիզին մէջ Հանրապետականաց քաղաքական
մէկ մեծ ժողովը: Կանխաւ եղած ծանուցումներուն
չնօրհիւ՝ հազարէ աւելի բազմութիւն մը եկած էր
մտիկ ընել նոր աստիճանու մը յանձին Մէյն Նահան-
գի ազգային երեսփոխան Տ. Լիթլըֆիլտի, որ չորս
հազար մղոնի չափ ճամբորդելով եկած էր Քալիֆոր-
նիոյ ժողովրդին ըսել թէ ինչպէս քուէարկելու էին
իրենց ներքին ընտրութեանց մէջ անգամ:

Մէյնի Երեսփոխանը, որ սովորական աստիճանու
մ'է, գործածեց այն ամեն սովորական փաստերը որք
Հանրապետականաց մասի փաթթոց եղած են երկար
ատենէ ի վեր: Տ. Լիթլըֆիլտ 1893ի դրամական տագ-
նապը վերագրեց Ռամկավարական Վարչութեան, իսկ
երկրին սյւմեան բարգաւաճ վիճակը նկատեց Հանրա-
պետական յաղթանակ մը: Մաքսի խնդիրը, արծաթի
և ուրիշ նոյնօրինակ հարցեր իր բանախօսութեան մէջ
կարեւոր տեղ մը զբաւեցին՝ Հանրապետական ընդհա-
նուր սովորութեան համաձայն: Սակայն Մէյնի քաղա-
քագէտին բացատրութիւնները այնչափ տարօրինակ
էին որչափ անտեղի, փասն զի ոչ Ռամկավարականք
ուղղակի պատասխանատու էին հին անձկութեան, և
ոչ ալ Հանրապետականք՝ ներկայ կայսրութեան որ
արդիւնքն է Իւքօնի ոսկոյ հանքերուն ու վերջի մի
քանի պատերազմներուն օրոնք Ամերիկեան հրապարա-

կը դրամով ողողեցին: Լիթլըֆիլտի ինչպէս նաև ա-
մէն Հանրապետականի կարծեօք ամեն բարիք իրենց
կուսակցութեան վերագրելի է, իսկ Ռամկավարականք
—երկու մեծ կուսակցութեանց ազատականն ու յա-
ռաձգիմականը— երկրին շահերը վտանգող խեղաքար-
ներ են: Սակայն կարելի չէ ուրանալ թէ Միացեալ
Նահանգաց ներկայ զարգացումը, փառքն ու մեծու-
թիւնը Ռամկավարականաց ազատական վարդապե-
տութեանց ու սկզբունքներու ուղղակի և անուղղակի
հետևութիւններն են: Քիսանալու ենք թէ ամեն խըն-
դիր իր երկու կողմերը ունի: Լիթլըֆիլտ ուրիշ հան-
րապետականներու նման քաղաքական այս խնդիրնե-
րու մէկ կողմը միայն սերտած՝ ու միւս կողմը ան-
տես ըրած է բոլորովին: Սակայն հասած կերեի ժա-
մանակը երբ անհատի մը անունը, ճարտար լեզուն և
կամ կուսակցութեան մը դրամն ու ըրած արտաքին
ցոյցերը բաւական պիտի չըլլան ճշմարտութիւնը պա-
հել քիչ շատ գիտակից հասարակութենէն, որուն աչ-
քերը բացուած են ըստ բուսականին՝ տեսնելու և հաս-
կնալու տրամաբանական այն վարպետ խաբէութիւն-
ները որք յաջողեցան՝ երկար ժամանակ աղքատ դա-
սակարգը կիթել՝ յօգուտ անկուշտ մեծատուններուն որք
Հանրապետականաց ախոյեաններն են ամեն տեղ:

ԿԵԱՆՔԻ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ

—0—

Երբ մանկութեան կայարանէն լուսաւոր՝
ճամբայ կեննեք զուարթ թեթև որպէս օդ,
Ամեն քայլ մեզ կառաջնորդէ անձանօթ
Նպատակին յաւիտենիցն հեռաւոր:

Երբ մեր կենաց կառախումբը մուծ ու սև
Անդունդներու մէջ կը խուժէ մթաղէմ՝
Խաւարին հետ կը մաքառինք դէմ առ դէմ:
Կողման կարծես ուրուականներ մեր առջև:

Եւ մեր սրտեր՝ սուսուտուն որ ուրախ
Զուարթ էին՝ յոյսով լեցուն լուսապանծ,
Կը խռովին, երկիւղ պատէ մեզ յանկարծ.
Անդունդները գտան՝ սարսափ կազգեն վախ:

Յուսոյ Քաղաքն է որ կանցնինք դողալով.
Ճամբուն վրայ այս դաշտ մըն է արտասուաց.
Ճամդորդները՝ խաղալիքներ այս կենաց՝
Սարսափահար կը տառապին խոկալով:

Վտանգաւոր արհաւիրակի այս ճամբան՝
Արտասունքով լեցուն ուղղին շինեց էն.
Պէտք չէ փախնալ արհաւիրքէն այս մութէն.
Կեանքի ճամբան այս է. ինչ հարկ վախ այնքան:

Լոյսէն դէպի խաւար տանող այս ուղին
Թէև անտես խորը տանի այս մութէն՝
Դէպի անդունդ վհատութեան անդունդէն.
Սակայն կերթայ հոն ուր լոյսեր շողալին:

Անդունդներու այս մութին մէջ երբ փակուած
Արեգական շառաւիղ մ'իսկ չենք տեսներ,

Բայց մեզմէ վեր լոյսին մէջ կան քաղաքներ.
Որք կը խնդան երբ մենք գողանք սարսափած:

Սակայն հեռուն, վերը՝ դէպ ի Հորիզոն,
Ճամբորդութեան վերջի կայանն է մարդուս.
Կառախումբը հոն կը տանի ամենուս.
Հանգստի մեծ կայարանն է մարդոց հոն:

Կեդրոնական մեծ ուտանն է այդ քաղաք,
Հոն ճանապարհք բոլոր մարդոց միանան.
Բարեկամներ, թշնամիներ հոն կուզան
Մեծն ու փոքր, երիտասարդ ու տղաք:

Ինչ որ ըլլայ հոգ չէ մարդուս հէզ՝ ճամբան՝
Ընտրած ուղղին այս կեանքի մէջ գէշ թէ լաւ,
Հոգ չէ եթէ հիւսիս վազէ կամ հարաւ,
Հոն պիտ գտնէ վարձատրութիւնն իր արժան:

Եթէ ցաւոց քաղաքին մէջ այլոց պէս
Երկար մնաս՝ կամ արտասոււոց դաշտին քով,
Համբերէ դու, զի քու կառքը շտապով
Պիտի սուրայ նոյն ճամբուն մէջ վերջապէս:

Ինչ որ դիզես այս ճամբուն մէջ պահեստի,
Ինչ որ ըլլայ նպատակդ՝ աշխատանք,
Արցունք, քրտինք, փորձ ու կուր ամեն ջանք
Պիտ՝ գան լռեն մեծ քաղքին մէջ հանդատի:

Վաստակարեկ մարդիկ հոն տեղ կը հանգչին.
Հոն բեռներդ ալ, ո՞րչափ ծանր, չի կան արդ.
Հին սիրելիք քեզ կը գտնեն հոն գուարթ՝
Այդ քաղքին մէջ՝ մարդոց հանգիստը վերջին:

Հոն չի կան վիշտ, չ'կան արցունք չի կան խեղ,
Հոն կը գտնէ մարդն իր յոյսը կորսուած.
Հոն են ինչ որ մենք կերազենք թէ Աստուած
Կեանքի այս մութ ճամբուն վրայ պահած էր:

Եւ հոն պիտի տեսնենք թէ մարդ լոկ ստուեր՝
Հիւսէ մըն էր, փոշի մ'էր լոկ շամանդաղ.
Հոն պիտ՝ տեսնեն մեր աչքերն աջ ու ձախ
Մեծութիւնը ահաւորին՝ գանհուն Սէր:

Հ. Է.

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

—0—

Գիւցազնութիւնը հոգիի փառաւոր մէկ յաղթու-
թիւնն է մարմնոյ կամ մարդուս ֆիզիքական կազմու-
մութեան վրայ: Մարդկային քաջութեան ու համար-
ձակութեան կեդրոնացումն է այն:

—Յուսախարութիւնը հպարտութեան քոյրն է, որուն
տեղ կը թագաւորէ շատ անգամ՝ անոր բացակայու-
թեան ժամանակ:

—Ուրիշի դժբաղդութիւնը մի՛ քննադատեր՝ եթէ ա-
նոր ցաւերը աւելի ծանրացնել չես ուզեր:

—Ոչինչ աւելի նկարագրական է մարդուս մէջ քան
այն վարմունքը որ կրնայ ունեցած ըլլալ դէպի խե-
լագար անձ մը:

—Ընել դիւրութեամբ ինչ որ դժուարին է ուրիշի
մը համար՝ հանճարի նշան է. ընել ինչ որ անկարե-
ւի կը թուի հանճարին՝ նշան է երկնատուր ձրից:

—Մեր պարտականութիւնն է ջուրիչին լօգտակար
ըլլալ մեր կարողութեան՝ և ոչ թէ մեր փափաքածին
չափով:

—Չարը՝ ինքնիրեն կածի՝ մարդուս սրտին մէջ, բայց
բարին համար աշխատանք՝ ու քաջութիւն՝ պէտք է:

—Մեծ մարդը այն է որ արգարութիւն կը գործէ,
և որոյ մէջ բնութիւնը կրցած է յաջողիլ: Սոսկայի-
ները արտաքոյ կարգի արարածներ չեն, այլ բնութեան
սաշմանածներն են միայն. իսկ մնացեալները անոնք
են որոնք եղած չեն ինչ որ պէտք էր ըլլային:

—Մեր կեանքը ուրիշ բան մը չէ՝ եթէ ոչ սանարի
մը սկուաներուն մէջէն դուրս եկող փրփուր դարձած
օճառի գունտեր, ասոնք կը կազմուին թեթև շունչի մը
գորութեամբ, կը բարձրանան, կը մեծնան ու կը վարդար-
ուին արեգի զանազան գոյներով. կապրին քիչ մը ժու-
մանակ օդին մէջ, և վերջապէս կանհետանան՝ իրենց
ետին թողլով կաթիլ մը շուր միայն: Բանաստեղծներ
այս բաղդասութիւնը ըրած են շատ անգամ՝ ուշա-
գրաւ ու ճշգրիտ բաղդատութիւն մը: Երեկ, փայլի և
աներևոյթանալ. ծնիլ տառապիլ և մեռնիլ: Սոսկ չէ՞
բոլոր պատմութիւնը թիթեռնիկի մը, մարդու մը, ազ-
գի մը կամ մուրսակի մը կենաց:

—Սոյն մարդը որ հոսանքին հետ կերթայ կամ՝ չա-
ռաջնորդեր ինքզինքը բարձրագոյն սկզբունքներու հա-
մեմատ՝ այն որ իր խտիւղն ու համազումը չունի՝ աշ-
խարհիս կահկարասեաց մէջ կտոր մը պարզ առաքկայ
է, փոխադրելի իր մը՝ փոխանակ կենդանի և շարժող
էակ մը ըլլալու: Սոսկայիները ձայնի մը խուլ ար-
ձագանքն են և ոչ ձայնը: Այն որ ներքին կեանք
մը չունի՝ զինքը չըջապատող պարագայից գերին է.
կը նմանի ջերմաչափ գործիին որ հանդարդ օդին իսկ
գերին է, կամ փետուրի մը կտորին՝ որ կը սարուրե-
րի ամեն հովի սողն:

—Կեանքի քաղցրութիւնը աշխատութեան կամ ըզ-
բաղումի մէջ փնտուելու է: Մարդոց ամենազգրադները
անոնք են որոնք խորհելիք կամ ընելիք բան մը չու-
նին կեանքի մէջ: Չի գործող միտքը անշարժ մեքե-
նայի մը կը նմանի որ ոչինչ կարտագրէ:

—Հակառակութիւնը տեսակ մը բարկութիւն է որ
կը վախնայ ինքզինքը հրապարակ հանելէ:

—Վրէժխնդրութիւնը տգէտին պարծանք է կրսն.
մեծ մարդիկ հոգեկան սկարութեան անկասկածելի
նշան մը կը սեպեն զայն, բայց կան պարագաներ երբ
ներողամտութիւնը կը դադրի այլ ևս առաքինութիւն
մը ըլլալէ:

—Աստուած ստեղծեց ամեն բան, բայց չարը ինքն-
իրեն երեւան ելաւ:

—Բարոյագէտի մը ըսին թէ այսինչ մարդը կը չա-
րախօսէ քո մասին. չեմ հաւտար պատասխանեց, վա-
սըն զի բարիք մ'ըրած չունիմ՝ այդ մարդուն:

Ընտիր կերակուրի համար գևսս

ՍԻԹԻ ՊԵՅԲԸՐԻՆ

ձ. Մ. Քոհնըր և Փիքֆորթ, ճաշարանատիրք

1138 ԱՅ Ըթրիթ, Ֆրէզնո, Բալ.

ԱՆՇԱՐԺ ԿԱՂՈՒԱԾ ԵՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

— 0 —

Մեզի հետ գործ ունեցող ու և է Հայր Հարցուր և տես թէ մեզմէ գոհ եղած չէ: Մենք Հայոց աւելի շատ կարուած կը ծախենք քան միւս բոլոր գործակալութիւնք ի միտսին ստենբլ: Եկ և մեր ունեցած Այգիներու, Ծառատաններու և ուրիշ տեսն տեսակ կարուածներու գները լմէ:

Մօր Եւ Նիս

1150 Ա. Փճրոց. Ֆրէզնո

ՊԱՇՏՅՈՒՆ ԱՄՆ ԾԱՆՈՎՅՈՒՄ

— 0 —

Ազգային Հոգաբարձութեան խնդրանք՝ յարաջրկայ Նայեմբեր Գի Կիրակի օրը, կէս օրէ վերջ, ժամը երկուքին Ս. Երբորդութեան Եկեղեցւոյ Ընդհանուր Ժողովը արտաքոյ կորգի նիստ պիտի ունենայ նոյն Եկեղեցւոյ մէջ՝ կարգ մը կարևոր խնդիրներ բաժնու համար: Ի մէջ այլոց ժողովին պիտի ներկայանայ Ատաշնորդի ընտրութեան ասկախ խնդիրը:

Կը խնդրուի բոլոր անդամներէն ներկայ լինիլ անհրաժեշտ այս կարևոր ժողովին:

Ի Գիմնոց Ընդհ. Ժող. Ս. Երբ. Եկեղեցւոյ Ասենազպիք Մ. Աւէմեան

Յ. Գ. Ամեն անոնք որք ասկախին ստորագրած չեն Եկեղեցւոյ կանոնադիրը կը հրաւիրուին ընդ փոյթ ստորագրել զայն՝ որպէսզի ձայն ու քուէ ունենան ներկայ կարևոր խնդիրներու մէջ:

Ֆրէզնո, Հոկ. 2 1902

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻ

— 0 —

Ամեն Կիրակի օրեր ժամերգութիւնք կրկին առ ուստեան ժամը 9:30ին: Քարդի ժամն 11. Երեկոյեան դասը՝ կէս օրէ վերջ ժամը 3ին:

ՀԱՅ ԵՐԻՅԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ

— 0 —

Ճէյ և Սանթաքարա փողոցներուն անկիւնը: Ամեն Կիրակի առաւ ժամը 10ին Կիրակնօրեայ գրքոց և կեօրէ եաքը ժամը 3ին Հայերէն քարոզ կըսույ:

Չամիչի Ընկերութեան

Վարձած Փաթիկ Հովգերը, որոնց արտօնեալ են Այգիկանք իրենց շտաբները յանձնել նոյն Ընկերութեան Հարչոյն:

Արմապի ձ. Ք. Ընկ.	Թուլարի
Արմաթրանկ Ֆրոթ Ընկ.	Արմօնա
Պարնի Պ. Լ.	Ֆալլըր
Քասըլ Պրատըր	Արմօնա
Շատտըր և Ընկ.	Ֆրէզնո
Տալիսիկ Զ.	Ֆրէզնո
Իլըլ Փ. Ս. Ընկ.	Ֆրէզնո
Խաթըն Փրօսիւարըս Փ. Ընկ.	Սայթէրօրօ
Սայըն Վէյթ Ընկ.	Էլ Քաճօն
Էլ Քաճօն Փ. Ընկ.	Էթիփանտա
Էթիփանտա Ֆրոթ Ընկ.	Ֆրէզնո
Ֆրէզնո Հօմ Փ. Ընկ.	Սէլմա
Կրիֆին և Ըքէլի Ընկ.	Ֆրէզնո
	Տայնուպա
	Սուլթանա
	Փարլիէ
Կէյս Ֆրոթ և Բէյլին Ընկ.	Թրէյլըր
Կուկընէյթ և Ընկ.	Ֆրէզնո
Հասթ, Ա. Լ. Ընկ.	Ֆրէզնո
	Սէլմա
Հանֆրա Բ. և Տ. Ֆ. Փ. Ընկ.	Հանֆրա
Ինտըրպայտըն, ձ. Պ. Ընկ.	Ֆրէզնո
	Հանֆրա
Քինկալըրի Քօօփ Փ. Ասան.	Քինկալըրի
Լինէա Քօօփ Փ. Ասան	Փարլիէ
Մասիւնըն Քօօփ Փ. Ընկ.	Մասիւնըն
Մարակա	Մասիկա
Մարգարեան Զ. Ընկ.	Ֆրէզնո
Մատիւնըն և Պաննըր	Այգիին մէջ
	Միլի
Օլիանտըր Փ. Ընկ.	Օլիանտըր
Փօրթըր Պրօստըրս Ընկ.	Ֆրէզնո
	Բիտլի
	Սէլմա
	Պէքրօֆիլա
Ֆինիքս Բ. Ս. և Փ. Ընկ.	Ֆրէզնո
	Ֆալլըր
	Քինկալըրի
	Հանֆրա
Բօլընպըրի Պրօս. Ընկ.	Սէլմա
Բուս, Իթիլ և Հարվիլ	Մալքըս
Սէյըր, Ա. Լ.	Ֆրէզնո
Սերբեան Եզրարք	Թուլարի
	Լըթօր
	Լաս Փալմաս
Իւնիլըն Քօօփ Փ. Ասան	Ֆրէզնո
Տրօճ Ֆրոթ Քօ.	
Քալիֆ. Բէյլին Կրօսըրս Աստուիչըն	
Ա. Լ. ՍԷՏԸՐ, Ասենազպիք	

GEORGE BROS.

ՀԱԳՈՒՍՏԵՐՈՒ ԳԼԽԱՐԿԻ ԵՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ
ՃԵՐՄԱԿԵՂԷՆԻ ՎՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԵՒ
ԱՌՍՋՆԱԿԱՐԳ ԳԵՐՉԱԿՆԱԲ.

1109 ՃԷՑ Փողոց, — Ֆուք Պլաք — Ֆրէզնո.
Թէլէֆոն: — — — Ուայթ 711

Հասարակութիւնը փողոցի վեր փորձով գիտէ որ
դէն թէ այս խանութիւն մէջ ծախուած առէն տարանք
իրենց տեսակներուն մէջ բաւարարներն են, բայց շատ
քիչեր գիտեն թէ իրենց դէնները բաղդատարար ու
րիչներէ բնաւ տարբերութիւն չունին:

Կը փափաքինք որ անգամ մը փորձէք և փաստաւոր
ցնէք զուք զձեզ այս կարևոր կէտին համար. անկէ
յետոյ որիչ տեղ չէք երթար գնել ինչ որ կարելի է
սասանալ ճՕՐՃ ԵՂՐԱՅՐՆԵՐԷՆ:

ԹՐԷՅ ԹՈՒՂԹԻ

ԿԱՄ ԹՈՒՂԹ ԹՐԷՅԻ

ՀԱՄԱՐ ԳՆԱ

Sorutyj Pashkianci Ընկ.

Ֆրէզնո՝ 15 ԱՅ՝ Փողոցներու անկիւնը

Ֆ Ր Է Չ Ն Օ

ԼԸՄՊԸՐ ՔԸՄԲԸՆԻ

ԳՐԱՍԵՆԵԱԿ ՈՒ ՎՃԱՌԱՏԵՂԻՆ
ԱՅԿՎԷՆԹՈՒՐՍՓՈՂՈՑՆԵՐՈՒ ԱՆԿԻՒՆԸ

Թէլէֆոն — — — Մէյն 24

ՖՐԷՉՆՕ, ՔԱԼԻՖՕՐՆԻԱ.

ԱԸԹՐԸՆ ՓԸՍԻՑԻՔ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Եթէ թուրքիայէն Ամերիկա եկող բարեկամ մը
ունիս, կամ եթէ կը փափաքիս թուրքիա կամ այլ
ուր երթալ, թիքէթի համար գիտէ Ալթըրն Փըսիքիք
ընկերութեան օֆիսը: Ամերիկայի ու եւ մէկ կէտին
համար սոմս կը վաճառէ միլիոնայն ընկերութիւնը: Ա-
ւելի տեղեկութեանց համար գիտել տո

Ճ. Ֆ. ՀԻՔՍԸՆ Թ. Ֆ. ՊՐՕՄՆՀԱՆ
Տիփիսըն Փասինսըր Լյճընթ: Սիթի թիքէթ Լյճընթ
Քաղաքի գրասենեակը — Թիւ 1013 ՃԷՑ Փողոց,
Նոր Փաթըրսըն Պլաքին անջև

ԿԸ ՅԱՆՉՆԱՐԱՐԵՆՔ

Վ. Մ. ՃԱՆՍԸՆ ԵՒ ԸՆԿ.

ԿԱՌ-ԲԵՐՈՒ ՀԱՆԳՍՏԱՐԱՆ

Հարնէպ Մարակ և Ծածկոցներ: Այս գաշտի մէջ
ամենատեման և ընդարձակ վաճառատունը
1817—1819 Թուարի փողոց, Փօսթ Օֆիսին դիմացը:

Ճ. Մ. Սերրոբեան, Ճ. Պաննըր, Յ. Մ. Սերրոբեան

Սան Ռօբիևի Վաղի Լմուտ Քօ,

Ճ. ՊԱՆՆԸՐ, Վարդ:

ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱԼՈՒԱԾ ԵՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիւ 954 ԱՅ, Փողոց, Ֆրէզնո, Քալիֆորնիա:
Թէլէֆոն, Մէյն 40

Եթէ կը փափաքիս գնել կամ ծախել մշակուած կամ
անմշակ ամեն տեսակ կարուած՝ եկուր և մեզ տես թէ
ինչ տեսակ առաջարկութիւններ կրնանք ներկայացնել
քեզ: Ներկայացուցիչներն ենք շատ մը տաճարակարգ
ապաշտօնադրական ընկերութեանց, որոց համար ձեր
գործերը կը խնդրենք:

DR. GAZARIAN DENTIST

ՏՐՔ. Յ. ՂԱԳԱՐԿԻԱՆԻ
ԱՏԱՄՆԱԳՈՐԾ ԵՒ ԱՏԱՄՆԱԳՈՅԺ
Չանն Պլաք, ԱՅ Ըթրիթ, Ֆրէզնո, Քալ.
Գոհացուցիչ և սոսաճակարգ գործ: Կատարեալ քու-
հացում Յանախորդներուն: Գինները միշտ չափուար:
Թէլէֆոն — — — — — Ուայթ 231

ՍԵՐՈՒԲԵԱՆ ԵՂԲԱՐՔ

Ամենաբարձր գին կը վճարեն
ԹՈՒՉԻ, ԴԵՂՉԻ ՈՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ
ՉՈՐ ՊՏՈՒՂՆԵՐՈՒ:

ՖՐԷՉՆՕ ՄԱՔԱՐՕՆԻ ՖԱՔԹԸՐԻ

*** Ա. ՏԻԱՎՉՉԻՕ — ՏԵՐ ***
Սան Պէնիթօ փողոց, Աճի մօտ: Ֆրէզնո, Քալիֆ.

Ս Ա Ա ՇՈՒԱՅՉԸՐ,

ՀԱՐՆԷՍ, ԹԱՄԲ, ՄՏՐԱԿ, ԾԱԾԿՈՑՆԵՐ, ԵՒՆ
Ամեն տեսակ Նորագումներ կըլլան փութով:
1920 Մարտիոգա Ըթրիթ, Ֆրէզնո:

ՃԻՆԹՐՈԹ - ՊՕՐՏՐՈ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1815, 1821 ԹՈՒԼԱՐԻ ԸՍԹՐԻԹ
Մեծաքանակ վաճառականք Նափայի, Սընուայի ևն.
գինիներու, տեղական և ներածեալ օղիներու:

ՆԵՐԿԱՅՍՅՈՒՑԻՉ ԷՅՃԷՆԹՆԵՐ
Բիւսթիզմի ապաշով դեղ ճանչցուած ՈՒԻԹԸՆԻ
ՍԷՏԻՍԻՆԼ Լուրերուն: —Թէլէֆօն, Ուայթ 817:—

Քաւար Եղբայրներ

Կը ծանուցանեն թէ այս տարի ևս կակնկալեն ընդունիլ Հայ այգեպաններու արտադրած պտուղներն և՛ կը վստահացնեն թէ ամէն յաճախորդ գոհ պիտի մնայ այս ծանօթ տունէն:

J. K. ELLEZIAN

Վ Ա Ճ Ա Թ Ա Կ Ա Ն
Նպարեղէններու, պտուղի, սիկարի, ծխախոտի, թէյի, սուրճի, պէյքիկի փավառքի, ձիթախղի ևն.
1145 ԱՅ փողոց —Ֆրէզնօ— Թէլէֆօն Պլաք 773

Պարփօք Ըսրէյալըս,

ԷԼ և Ֆրէզնօ փողոցներ, Պարտիզին դիմացը
Թէլէֆօն, մէյն 174 — — — — — Ֆրէզնօ
Վարձու կառքեր, ճամբորդներու ձիերուն հողատար
րութիւն: Գճեղ և ծախել: Բոլոր դիշերը բաց ենք:

ԳՆԱ ԱՌ

ՊԱՐՐԷԹ ՀԻՔՍ ԸՆԿ.

ՎԱՌԱՐԱՆՆԵՐՈՒ, ՊՈՂՊԱՏԵՍՅ ԲՆՆՉԵՐՈՒ,
ՆԵՐԿԻ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՐԿԱԹԵՂԷՆ

1035-1044 ԱՅ ՓՈՂՈՅ ԹԷԼԷՖՈՆ
ՖՐԷՉՆՕ, ՔԱԼ Էքսչէնջ —ԹԽ 2

Ձեր Ապրիլի 14-րդ ամսուայի համար դիմեցէք առ

Պ. Ֆ. Շեփերտ և շ Ընկ.

1123 ՃԷՑ Ըսթրիթ
Պահանջները փութով կը վճարուին: Յաճախորդք
միշտ գոհացում կատանան:

Ձեր ԱՏԱԽՉՆԵՐԸ ԳՆԵՑԷՔ

Ա. Ա. ՓԻՐՍ

ԱՏԱԽՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷՆ: ՓՐԷՉՆՕ ՔԱԼ.

ՏՐՔ. Յ. Հ. Փարսեղեան

ՖՐԷՉՆՕ ԼՍԵ ԷՆՏ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԱՆՔ ՊԻԼՏԻՆԿ
Սենեակ 16 17, Թէլէֆօն Պլու 492. Ֆրէզնօ Քալ.

Ը Ն Տ Ր Ա Կ Ա Ն Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ Ն Ե Ր
Ընտրութիւն. Նոյ. 4, 1902

Փրպիք Ատմինըսթրէյթըրի համար

Բ. Տ. Չիքքընտըն

Ռամկավարական կանոնաւոր ընտրելի:

Հանրապետական կանոնաւոր ընտրելի

Բ. Ն. Պարսթոյ

Քալիֆի Ռիքօրտըրի համար

ՏՐՔ. ԱՆՃԸՍ Պ. ՔՕՎԱՆ

ՔՕՐՕՆԸՐԻ ՀԱՄԱՐ

Ռամկավարականներու կանոնաւոր ընտրելի:

Գաւառական Գանձապետի (Քալիֆի Ռիքթըրը) համար

Ս. Վ. ՄԱՐՇԸԼԼ

Հասարակապետական կանոնաւոր ընտրելի

ԷՕՆ Վ. ԿԻԷՐԸԱՐՏ.

Հանրապետական Ընտրելի ԵՔԻԻՖԻ համար
Ձեր օգնութիւնը կը խնդրուի յարգանքով:

Ընդհանուր Դատախազի համար

Ճ. Վ. ՃՕՆՍ

Հասարակապետականաց Ընտրելի

Թաքս Քոլէքթըրի համար

Ա. Հ. Կրիկի

Կանոնաւոր Հասարակապետական Ընտրելի.

60րդ Երեսփոխանական Նահանգարաժնէն Երեսփոխանի համար.

Ճ. Օ. Թրէյալըր

Կանոնաւոր Հասարակապետական Ընտրելի:

Կանոնաւոր Ռամկավարական ընտրելի

Ճ. Վ. Բաւիքի

Երրորդ քաղաքարաժնի համար (Ֆրէզնօ) արդարութեան դատաւոր (ձըսթիս օֆ տը Փիս):

Երրորդ քաղաքարաժնի Արդարութեան դատաւորի (ձըսթիս օֆ տը Փիս) համար:

Ճօն Ճօնսէն Որդի

Հանրավարական կանոնաւոր ընտրելի:

Քօրօնըրի համար

ՏՐՔ. Վ. Թ. Պարսթոյ,

Հասարակապետական կանոնաւոր ընտրելի